



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան

«13» նոյեմբերի, 2020 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 25-Ա/Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿՈՂՄ ԾՐԱԳՐԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 7-ի N 20-Լ հրամանի հավելվածի 4-րդ գլխի 18-րդ մասի 7-րդ կետը և հիմք ընդունելով 2020 թվականի փետրվարի 20-ի N 05/Ա/Ք հրամանով հաստատված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2020 թվականի նոյեմբերի 10-ի N 3 արձանագրությունը և Գիտական հետազոտությունների աջակցության եվրասիական ասոցիացիայի անդամ կազմակերպությունների հետ ձեռք բերված համաձայնությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել մրցութային կարգով ընտրված ծրագրերի ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. Ֆինանսավորման երաշխավորված գիտական ծրագրերի ֆինանսավորումը սկսել 2020 թվականի դեկտեմբերի 1-ից:
3. ՀՀ գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչությանը (պետ՝ Ռ. Ասատրյան)՝
 - ա) ապահովել մրցույթի արդյունքների վերաբերյալ իրազեկման աշխատանքները,
 - բ) կազմակերպել համապատասխան պայմանագրերի կնքումը:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող, գիտական գործունեության կազմակերպման վարչության պետ Ռ. Ասատրյանին:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿՈՂՄ ԾՐԱԳՐԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ

ՑԱՆԿ

Հ/հ	Ծածկագիր	Ծրագրի անվանում	Ղեկավար	Գիտական կազմակերպություն
1	EAPI2020-065	Ուղղորդված պրոբիոտիկներ ջրային կամ ակվակուլտուրաների համար	Փեփոյան Աստղիկ Զավենի	ՀՀ ԿԳՄՍՆ Հայաստանի ազգային ագրարային համալսարան
2	EAPI2020-056	Դեղաբույսերի վնասատուներ. դեղագործական և կենսատեխնոլոգիական արժեքավոր նյութեր պարունակող բույսերի հետ համակցված բուսակեր միջատների և տզերի գենոմային կազմավորման և միկրոբիոմի կազմի առանձնահատկությունները	Քալաշյան Մարկ Յուրիի	ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն